ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 600-Ա

20 դեկտեմբերի 2023 թվական

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ՝ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1733 գրությամբ պայմանագիրը միակողմանի լուծելու Անի համայնքի ղեկավարի գրությամբ ծանուցումը «ՖԻՈՐԻ ԳՐՈՒՊ ԱՄ» ՍՊԸ-ին, որը հրապարակվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային համակարգում, ինչպես նաև Վաճառողին տրվել էր 10 աշխատանքային օր վճարելու որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից չեն վճարվել վերը նշված ապահովումները՝ ***որոշում եմ՝***

1. Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը՝ <<խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարները>>, ուստի անհրաժեշտ է ծանուցումը «ՖԻՈՐԻ ԳՐՈՒՊ ԱՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06964089, հասցեն՝ Լոռու մարզ, Կուրթան գյուղ, 5 փողոց, նրբ. 10, տուն 7) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«20» դեկտեմբերի 2023 թվական
Քաղաք Մարալիկ